

ընդարձակ տեղեկութիւնք խնդրած լինելով, սոյն գրեանքն առ ինքն յուղարկուելոյն առթիւը Վեհափառ Հայրապետին յատուկ օրհնութեան մի կոնդակին եւս արժանացած էր, ի նշան բարձր գոհունակութեան զիւր վաստակոցն:

Պ. Գիւլօրիէ վերջին ժամանակներս Փարիզու արեւելեան կենդանի լեզուաց Գպրանոցին մէջ՝ արգի հայերէն լեզուի ուսումը կաւանդէր, եւ ամբողջ Գաղղիոյ մէջ այժմ ինքն էր միայն որ հայկական գրականութեամբը կը զբաղէր:

Աւստի եւ իւր մահը, որ դատարկութիւն մ' կ' լիթողու Գաղղիոյ հայկական ուսմանց գլխութեանը մէջ. ցաւալի կորուստ մի է մանաւանդ մեզ Հայոցս համար, ոյց սրտից մէջ քաղցր յիշատակ եւ երախտագիտական անջինջ զգացում մի կը լիթողու, ի նպաստ եւ ի պարծանս մեր ազգային գրականութեան՝ իւր մատուցած անգնահատելի եւ արժանաւոր ծառայութեամբը, որք իւր անուան փառքն եղած են ըովանդակ աշխարհի առաջ:

Սոյն ծառը Աղաբաշտապատու օրիորդաց վարժարանի աշակերտուհեաց կողմանէ կարգացուեցաւ Վեհարանում ի ներկայութեան Եղգիս Վեհափառ Հայրապետի ի շնորհաւորութիւն մեծափառ Տօնի Ծննդեան և Ետուածայայտնութեան Քրիստոսի:

Մ Ե Ր Գ Ա Ղ Յ Ր Ի Կ Հ Ա Յ Ր

ՄԵՐ ԱՇՄԱՐԻՏ ԲԱՐԵՐԱՐ՝

Աշակերտներս շատ ենք սիրում կիւրակէ և տօն օրերը. անհամբեր սպասումներ, թէ երբ շարաթուան աշխատութիւնից յետոյ պէտքէ հետեի եօթներորդ օրը, որ մենք ձգենք գիրք և դաս և հանգստանանք. Բայց եթէ իմանաք Հայր, թէ ինչպէս սրտատրոսի սպասումներ այն անհատական օրերին, երբ ոչ միայն հանգստանումներ, այլև հասնում մեր սրտի բաղձանքին, Գիտէք, ինչպիսի բաղձանք են զորքա. զիտէք, ինչ օրերի համար եմ ասում: Ո՛հ, այդ օրերը շատ չեն, այդ երջանկութիւնը ամենքի համար չէ, այդ օրերը տարուան մէջ սակաւաթիւ են, այդ երջանկութիւնը պահուած է միայն Սուրբ Էջմիածնի հովանեաց ներքոյ գտնուած մանուկ սերնդի համար: Այդ այն օրերն են որոնք մեզ արժանացնում են մանկութեան Բարեկամ, մանուկներին սիրող, մանուկների ապագան լուսաւոր առնող Բարերարիդ ներկայութեանն ու օրհնութեանը:

Այդ օրերից մէկն է այսօր:

Օրհնեալ է մանուկ Յիսուսը, որ իւր փրկարար Ծննդեան առթիւ. մեզ այստեղ է առաջնորդել: Օրհնեալ են և Քնու անզուգական Հայր, որ սիրալիր ակնարկութեամբ ընդունում և խրախուսումես մեզ՝ յառաջ դնալ լուսոյ և ճշմարտութեան ճանապարհով:

Քու մեզ օրհնիր Աւետարան Հայր, մենք էլ Քեզ կօրհնենք. Քու շնորհք խնդրիր մեզ համար, իսկ մենք երկար կեանք Քեզ համար. Քու մեր ուսումնարանի վերայ քաղցր աչք ունեցիր, ազահովիր նորա ապագան, մենք էլ Քո ջանքդ խոստանու մենք պահել: Քո սուրբ Աջովդ փոքրիկ Յիսուսի շնորհքը թող հանդէի մեր վերայ, իսկ մեր սրտաբուլիս կեցցեովք թող շատանայ Քո թանգազին կեանքը երկար տարի՝ ի լուսաւորութիւն բոլոր Հայ դաւակներէ:

Կեցցէ՛ կանչենք ուրեմն, ընկերներս, մեր խնամակալ Հայրը՝ կեցցէ՛ Հայոց ազգի մեծ Առասուորիչը:

Երգենք, կեցցէ՛, կեցցէ՛ և շատ կեցցէ՛:

ՊԵՐՃԱՆՈՅՑ ՊՈՕՇԷԱՆՑ

ՈՒՐ ԿՅԱՆԿԱՅԻ ՄԵՌԱՆԵԼ.

Ասա՛ դու ինձ, սիրո՛ւն սոխակ,
Երբ կըչափուի քո ժամանակ,
Ասա՛ փութով իմ սիրունակ,
Ո՛ւր դու կամիս, որ հողանաս,
Թէ՛ կըգայ օրհաս:
Կամի՛ն մեռնել պանդըխտական,
Հեռու երկրից հայրենական,
Թէ՛ բընի՞գ մէջ սովորական,
Վարդի ծոցում նստած անաս՛,
Հասանէ՛ քեզ մահ:
Ա՛խ, իմ սոխակ կանգնածէր լուռ,
Նայում էր ինձ կարծես տըխուր,
Եւ նա թըռաւ եւ գնաց ո՛ւր,
Թէ՛ պատասխան դու ինձ չըտաս,
Թող բարեալ գնաս:
Իսկ ես հողւով, սըրտով ցանկամ,
Իմ Հայաստան մի օր գընամ,
Եփրատի մօտ ես քընանամ,
Թո՛ղ պարաստէ՛ ինձ Հայաստան
Իմ մահուս դամբան: